ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 62 - 63 (16360) ՈՒՐԲԱԹ, 28 ՕԳՈՍՏՈՍԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ը ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

Օգոստոսի 24-ին Վրաստանը նշեց երկրի սահմանադրության ընդունման 20-րդ տարելիցը: Այդ օրվա առթիվ, Վրաստանի նախագահի Հավլաբարի նստավայրում անցկացվեց հանդիսավոր միջոցառում:

Միջոցառմանը մասնակցեցին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր բարձրագույն մարմնի անդամները, Գերագույն եւ սահմանադրական դատարանների ղեկավարները, սահմանադրական մյուս ինստիտուտների ներկայացուցիչները, մշակութային գործիչներ, ՁԼՄ-ների, ազգային փոքրամասնությունների եւ կրոնական միավորումների, դիվանագիտական կորպուսի ներկայացուցիչները:

Ելույթ ունենալով միջոցառմանը, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հայտարարեց, որ ինքը հանդես կգա օգոստոսի 24-ին, Սահմանադրության օրը ոչ աշխատանքային օր հայտարարելու նախաձեռնությամբ: «Դա պատմական օր է եւ դրանից հետո մեր հասարակական-քաղաքական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳԻՐԸ՝ 25 ՏԱՐԵԿԱՆ

Ուղիղ 25 տարի առաջ օգոստոսի 23-ին Խորհրդային Հայաստանի քաղաքացիները պատմական որոշում կայացրեցին՝ անկախությունն ընտրելով որպես միակ հնարավոր կարգավիճակ եւ երկրի հետագա զարգացման անշեղ ուղի:

1990 թվականի օգոստոսի 23-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի ընդունած Հայաստանի անկախության հռչակագիրը ոչ միայն իր անկախ պետությունը վերականգնելու հայ ժողովրդի դարավոր երազանքի արտահայտությունն էր, այլեւ՝ նրա երկու հատվածների՝ Հայաստանի ու Լեռնային Ղարաբաղի միավորման փաստացի իրողությանը իրավական տեսք տալու փորձ:

Անկախության հռչակագիրը հիմնվում էր Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի եւ Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհրդի 1989 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայկական ԽՍՀ եւ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» համատեղ որոշման վրա:

Հռչակագիրը բաղկացած է 12 կետից: Հռչակագրի ընդունումից շուրջ 1 տարի անց՝ 1991 թվականի սեպտեմբերի 21-ին Հայաստանում տեղի ունեցավ անկախության հանրաքվե, որի արդյունքում ձեւավորվեց Հայաստանի Երրորդ Հանրապետությունը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՌՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

«ԿԵՆՏՐՈՆԸ ՈՒՂՂՎԱԾ ՉԷ ՈՐԵՎԷ ԵՐԿՐԻ ԴԵՄ»

Օգոստոսի 27-28-ին պաշտոնական այցով Թբիլիսիում էր գտնվում ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը:

ՆԱՏՕ-ի գլխավոր քարտուղար Ենս Ստոլտենբերգը եւ Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին օգոստոսի 27-ին բացեցին ալյանսի հետ համատեղ ՆԱՏՕ-ի ուսումնավարժական կենտրոնը:

Իր խոսքում Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին եւս մեկ անգամ եւս նշեց, որ այն ուղղված չէ որեւէ երկրի, այդ թվում Ռուսաստանի դեմ:

Բացման արարողությունը տեղի ունեցավ Թբիլիսիի մերձակա «Կրծանիս» ազգային ուսումնական

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՍՏՈՐԱԳՐՎԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱԳԻՐ

Օգոստոսի 25-ին Հայաստանի գլխավոր դատախազ Գեւորգ Կոստանյանն աշխատանքային այցով գտնվում էր Վրաստանում: Թբիլիսիում կայացավ երկու երկրների գլխավոր դատախազներ Գիորգի Բադաշվիլու եւ Գեւորգ Կոստանյանի հանդիպումը:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին եկու երկների դատախազությունների միջեւ համագործակցության ընդլայնմանը, գործառույթների հստակեցմանն ու արդյունավետության բարձրացմանն ուղղ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

«ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԿԱՅՈՒՆԱՆԱ»

Օգոստոսի 25-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, կառավարության հերթական նիստում, հայտարարեց, որ ազգային տարադրամի փոխանակման կուրսի հետ կապված հարցը բացահայտ շահարկման թեմա է:

Վրաստանի վարչապետը բնակչությանը կոչ արեց խուճապի չմատնվել ազգային արժույթի՝ լարիի փոխարժեքի անկման պատճառով, նրա կարծիքով՝ երկրում առկա է «ակնհայտ շահարկումը»: Նա գործարարներին եւ երկրի բնակչությանը խորհուրդ տվեց չենթարկվել առանձին լրատվամիջոցների ու փորձագետների կողմից ստեղծված իրարանցմանը, եւ գործել միայն կառավարության ու երկրի ազգային բանկի կողմից տրված պաշտոնական տեղեկատվության հիման վրա:

Վարչապետը էկոնոմիկայի եւ

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ ԿԱՎԵԼԱՑՎԻ 14 ՏՈԿՈՍՈՎ

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 1-ից Վրաստանում դպրոցների մանկավարժների բազային աշխատավարձը կավելացվի 14 տոկոսով եւ կկազմի 355 լարի:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Լիա Գիգաուրին:

2015 թվականից կսկսվի ուսուցիչների մասնագիտական զարգացման եւ պաշտոնական առաջընթացի ներդրումը: Հետեւաբար, այդ սխեմայի շրջանակներում էլ կիրականացվի մանկավարժների աշխատավարձի ավելացումը: Կավելացվեն ինչպես բազային աշխատավարձը, այնպես էլ՝ հավելավճարները»,- հայտարարեց փոխնախարարը: Այդ նպատակով Վրաստանի կրթության նախարարությունը հատկացրել է 19 միլիոն լարի:

Բացի այդ, 2016 թվականի ապրիլի 1-ից ուսուցիչների աշխատավարձը կավելացվի եւս 50 լարիով եւ կկազմի 405 լարի:

Ուսուցիչների աշխատավարձի եւ հավելավճարի չափը կախված է նրանց որակավորումից, աշխատանքային ստաժից, ծանրաբեռնվածությունից, դասաժամերի քանակից, աշխատանքի յուրահատկությունից եւ դասարանի տեսակից:

«Օրինակ, ավագ ուսուցչի կարգավիճակով մանկավարժի նվազագույն հավելավճարը լրիվ ծանրաբեռնվածության դեպքում (շաբաթական 18 ժամ) կկազմի 160 լարի»,- պարզաբանեց Լիա Գիգաուրին:

Եթե մանկավարժը չի աշխատում լրիվ ծանրաբեռնվածությամբ, համեմատաբար կնվազի ինչպես աշխատավարձը, այնպես էլ՝ հավելավճարը: Ընդ որում, հավելավճարի կրճատումը չի վերաբերի դասղեկներին:

(Խորագրի շարունակությունը՝ 5-րդ էջում)

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՄԱԿ-ՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՄԲ

Ինչպես հայտարարեց Վրաստանի արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլին, ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայում Վրաստանը կներկայացվի մեկ պատվիրակությամբ, որը կգլխավորի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին:

Իսկ նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին կմասնակցի առանձին խորհրդաժողովներին: Նախարարի խոսքերով, հարցն արդեն համաձայնեցված է:

«Մենք արդեն անցել ենք գրանցման որոշակի ընթացակարգ: ՄԱԿ-ում Վրաստանը կներկայացնի վարչապետը: Նա խոսքով հանդես կգա գլխավոր ասամբլեայի նիստում: Իրակլի Ղարիբաշվիլին Վրաստանը կներկայացնի նաեւ մի շարք այլ միջոցառումներով, որոնք կանցկացվեն գլխավոր ասամբլեային զուգահեռ: Նա կմասնակցի նաեւ բիզնես ֆորումին»,- հայտարարեց ԱԳ նախարարը՝ հավելելով, որ վարչապետը կմասնակցի եւ ելույթ կունենա նաեւ «Հազարամյակի մարտահրավեր» կորպորացիայի խորհրդաժողովին:

Ինչ վերաբերում է երկրի նախագահի նյույորքյան այցելությանը, ապա, ինչպես նշեց Թամար Բե-

(Շարունակությունը՝ 3-րդ էջում)

ՕԳՈՍՏՈՍԻ 24-Ը ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՕՐՆ Է

ՎՐԱՍՏԱՆԸ ՆՇԵՑ ԵՐԿՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ 20-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

զարգացումն ընթանում է այս սահմանադրության շրջանակներում»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին: Նրա խոսքերով, հարկ է ժողովրդականացնել Սահմանադրությունը եւ այդ գործընթացում պետք է ներգրավել հասարակայնությանը: Այդ նպատակին հասնելու համար նախագահն առաջարկեց անցկացնել մրցույթ՝ «Մեր Սահմանադրությունը» անվան ներքո:

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին, իր խոսքում հայտարարեց, որ գործադիր իշխանությունն ինտենսիվորեն շարունակում է աշխատանքը Սահմանադրության կատարելագործման ուղղությամբ: «Մեր նպատակն է կառուցել իրականում ժողովրդավարական առաջադեմ եվրոպական տիպի պետություն, եւ մշակել մեր երկրին արժանի հիմնական օրենք: Հպարտ եմ նրանով, որ մեր կառավարությունը շատ բան է արել սահմանադրության պաշտպանությունն ապահովող ինստիտուտների ուժեղացման համար: Խոսքը վերաբերում է խորհրդարանին, նախագահի ինստիտուտին, դատարանին եւ ԶԼՄ-ներին: Այդ ինստիտուտները բացարձակապես ազատ են ցանկացած ազդեցությունից»,- հայտարարեց Իրակլի Ղարիբաշվիլին:

Միջոցառմանը ելույթ ունեցան նաեւ Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին, Սահմանադրական դատարանի նախագահ Գիորգի Պապուաշվիլին:

Վրաստանի Սահմանադրության 20-ամյա հոբելյանին նվիրված միջոցառմանը մասնակցեց Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Յուրի Վարդանյանը: Կրոնական միավորումների ներկայացուցիչների թվում միջոցառմանը ներկա էր Վիրահայոց թեմի առաջնորդ Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը:

Միջոցառմանը հրավիրված էին ու մասնակցեցին ծանրամարտում 1952 թվականի Օլիմպիական խաղերի չեմպիոն Ռաֆայել Չմշկյանը, բանաստեղծ-թարգմանիչ Գիվի Շահնազարը, Թբիլիսիի Պետրոս Ադամյանի անվան պետական դրամատիկական թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը:

ՎՐԱՍՏԱՆ-ՆԱՏՕ

ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կենտրոնի տարածքում: Միջոցառմանը ներկա էին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին՝ որպես զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, Վրաստանի օրենսդիր եւ գործադիր իշխանությունների բարձրաստիճան ներկայացուցիչներ, ինչպես նաեւ Հյուսիսատլանտյան դաշինքի ներկայացուցիչներ եւ վրացի զինծառայողներ:

Վրաստանում ՆԱՏՕ-ի ուսումնական կենտրոնը բացվել է այն միջոցառումների փաթեթի շրջանակներում, որոնք աջակցում են դաշինքին անդամակցելու Վրաստանի ձգտմանը: Փաթեթը 2014 թվականի սեպտեմբերին հաստատվել է դաշինքի՝ Ուելսի գագաթժողովի ընթացքում: Կենտրոնում պատրաստություն են անցնելու ՆԱՏՕ-ի եւ դաշինքի գործընկեր երկրների զինծառայողները:

Այցի շրջանակներում ալյանսի բարձրաստիճան հյուրը հանդիպումներ ունեցան Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլու, վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլու, պաշտպանության նախարար Թինա Խիդաշելու, արտաքին գործերի նախարար Թամար Բերուչաշվիլու հետ:

Կայացած հանդիպումներում քննարկվեցին դաշինքին Վրաստանի ինտեգրացման գործընթացը եւ այդ ուղղությամբ պլանավորված քայլերը, ինչպես նաեւ՝ ՆԱՏՕ-ի Վարշավայի գագաթաժողովի նախապատրաստման գործընթացը, տարածաշրջանային անվտանգության եւ Աֆղանստանում ՆԱՏՕ-ի առաքելությանը վրացի զինծառայողների մասնակցության հարցերը:

ԴԻՄԱԿԱՅՈՒԹՅԱՆ ԳՈՏԻ

ՎՐԱՍՏԱՆԸ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ Է ԱԲԽԱԶԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը դատապարտում է Վրացական երկաթուղու աբխազական տեղամասի վերականգնումը եւ Ռուսաստանից պահանջում է դադարեցնել այդ անօրինական գործողությունները:

Այդ մասին ասված է գերատեսչության օգոստոսի 24-ին տարածած հաղորդագրության մեջ:

Ավելի վաղ ՌԴ-ը պաշտպանության փոխնախարար Դմիտրի Բուլգակովը ռուսական ԶԼՄ-ներին հայտնել էր, որ, Օչամչիրա կայարանից մինչեւ Ինգուրի գետի կամուրջ, երկաթուղու վերականգնման համար աշխատում է ՌԴ երկաթուղային զորքերի շուրջ 500 զինծառայող եւ ավելի քան 50 միավոր հատուկ տեխնիկա:

Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունը դատապարտել է «Մոսկվայի հերթական ագրեսիվ եւ սադրիչ գործողությունը» եւ կոչ է արել կանգնեցնել «անօրինական գործողությունը» Աբխազիայի տարածքում:

ԱԳՆ-ը կոչ է անում միջազգային հանրությանը՝ միջոցներ ձեռնարկել «անօրինական քաղաքականության կապակցությամբ, որն ուղղված է Վրաստանի ինքնիշխանության ու տարածքային ամբողջականության դեմ»:

Մոսկվայի գործողությունների դատապարտմամբ հանդես եկավ նաեւ Վրաստանի վարչապետի՝ Ռուսաստանի հետ հարաբերությունների կարգավորման հարցերով հատուկ ներկայացուցիչ Զուրաբ Աբաշիձեն: Նա ապօրինություն է համարում Օչամչիրա-Ինգուրի երկաթգծի վերականգնման նպատակով Աբխազիայում սկսված աշխատանքները:

Նրա խոսքով, Թբիլիսին Ռուսաստանի հետ բանակցություններ չի վարում Աբխազիայի տարածքով երկաթուղային հաղորդակցության վերականգնման շուրջ: «Այդ թեման մենք չենք քննարկել ո՛չ Պրահայի ձեւաչափով, ո՛չ էլ այլ վայրում»,- հայտարարել է Աբաշիձեն:

ՌՈՒՍԱՍՏԱՆԸ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՆԳԱՄ ԽԱԽՏԵՑ ՕԴԱՅԻՆ ՏԱՐԱԾՔԸ

Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը բողոք է հայտնել Ցխինվալիի տարածաշրջանի հետ սահմանի շրջանում ռուսական ռազմական ուղղաթիռի կողմից Վրաստանի օդային տարածությունը խախտելու մեջ:

Վրաստանի արտաքին քաղաքական գերատեսչությունում գտնում են, որ ՌԴ-ի այդօրինակ գործողությունները «սադրիչ բնույթ են կրում եւ սպառնալիք են ստեղծում տարածաշրջանում անվտանգության ու կայունության պահպանմանը» եւ միջազգային հանրությանը կոչ անում համապատասխան գնահատական տալ Ռուսաստանի գործողություններին, որոնք ուղղված են Վրաստանի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ:

Նշենք, որ օգոստոսի 17-ին Ռուսաստանի Հարավային ռազմական օկրուգում մեկնարկել են խոշորամասշտաբ զորավարժություններ, որոնք անցկացվում են նաեւ Աբխազիայում ու Ցխինվալիի շրջանում: Վրաստանի ԱԳՆ-ը նկատել է, որ, բացի զորավարժություններից, Ռուսաստանը շարունակում է խախտել Վրաստանի վերահսկած օդային տիրույթը:

«Ռուսաստանի նմանատիպ գործողությունները կրում են սադրիչ բնույթ եւ սպառնալիք են ստեղծում կայունության ու անվտանգության պահպանման համար: ԱԳՆ-ը Ռուսաստանից պահանջում է հարգել միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները, կատարել ստանձնած պարտավորությունները, այդ թվում նաեւ 2008 թվականի օգոստոսի 12-ին կնքված հրադադարի վերաբերյալ համաձայնագրի պայմանները եւ ապաօկուպացնել վրացական տարածքները»,- ասված է գերատեսչության կոչում:

Հիշեցնենք, որ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, իր հերթին մտահոգություն էր հայտնել Ռուսաստանի սկսած մասշտաբային զորավարժությունների կապակցությամբ:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ԿՍՏՈՐԱԳՐՎԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԽՈՐԱՑՄԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱԳԻՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ված հարցերի լայն շրջանակ: Մասնավորապես, կարեւորվեց Վրաստանում Հայաստանի քաղաքացիների եւ Հայաստանում Վրաստանի քաղաքացիների կողմից կատարված հանցագործությունների բացահայտման, հետախուզվողների հանձնման եւ, որ ամենկարեւորն է, հանցագործությունների կանխման ուղղությամբ համագործակցությունը, ինչը վերջին տարիներին բավական արդյունավետ է իրականացվում: Երկուստեք կարեւորվեցին մաքսային ոլորտում առկա սերտ համագործակցությունը, որի արդյունավետությունն ակնհայտ է:

Երկու երկրների գլխավոր դատախազներն ընդգծեցին նոր՝ առավել հստակ համագործակցության հնարավորություն ընձեռող հուշագիր ստորագրելու անհարժեշտությունը:

Գեւորգ Կոստանյանը շնորհակալություն հայտնեց Վրաստանի գլխավոր դատախազ Գիորգի Բադաշվիլուն ջերմ ընդունելության եւ արդյունավետ քննարկումների համար ու իր վրաց գործընկերոջը պատասխան այցով հրավիրեց Հայաստան:

Նշենք, որ Հայաստանի գլխավոր դատախազի գլխավորած պատվիրակությունը Թբիլիսիից մեկնեց Աստանա, որտեղ մասնակցեց օգոստոսի 27-ին անկացված «ԱՊՀ անդամ պետությունների գլխավոր դատախազների կոորդինացիոն խորհրդի» հերթական նիստին:



ԱՄՆ-ԳԵՐՄԱՆԻԱ ՔՆՆԱՐԿԵԼ ԵՆ ՈՒԿՐԱԻՆԱՅԻ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Միացյալ Նահանգներն այն կարծիքին է, որ Ուկրաինայի կառավարությունը կատարում է Մինսկի համաձայնություններով ստանձնած իր պարտավորությունները եւ այդ գործընթացի մյուս մասնակիցները պետք է նույնն անեն: Այդ մասին հաղորդել է Սպիտակ տան մամուլի ծառայությունը՝ ամփոփելով ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի եւ Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի միջեւ կայացած հեռախոսազրույցի արդյունքները:

Բացի այդ, ԱՄՆ-ի նախագահը պաշտպանել է Գերմանիայի ջանքերը փախստականների խնդրի լուծման գործում, որոնք Եվրոպա են հասել Աֆրիկայի երկրներից:

ԹՈՒՐՔԻԱ ԿԱՆՑԿԱՑՎԵՆ ԱՐՏԱՀԵՐԹ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Թուրքիայում արտահերթ խորհրդարանական ընտրությունները կանցկացվեն առաջիկա նոյեմբերի 1-ին: Այս մասին հայտարարել է Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը:

Բացի այդ, Էրդողանը հայտարարել է ժամանակավոր կառավարություն ստեղծվելու մասին: Նա ասել է, որ Թուրքիայի վարչապետ Ահմեթ Դավութօղլուին կխնդրի ժամանակավոր կառավարություն ձեւավորել:

Հունիսի 7-ին տեղի ունեցած հերթական խորհրդարանական ընտրություններից հետո, որի արդյունքներով բավարար քվեներ չստանալու պատճառով իշխող «Արդարություն եւ զարգացում» կուսակցությունը (ԱԶԿ) կորցրել էր միանձնյա կառավարություն ձեւավորելու իրավունքը, ԱԶԿ առաջնորդ Դավութօղլուին չէր հաջողվել կոալիցիա կազմել խորհրդարան անցած երեք ընդդիմադիր կուսակցություններից ոչ մեկի հետ:

ՀՈՒՆԱՍՏԱՆ ԿՈԱԼԻՑԻՈՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԲԱՑԱՌՎՈՒՄ Է

Հունաստանի վարչապետ Ալեքսիս Ցիպրասը, որն անցած շաբաթ հայտարարել է իր պաշտոնաթողության մասին, բացառել է ազգային միասնության կառավարություն կազմելու հնարավորությունը, եթե իր կուսակցությունը բացարձակ մեծամասնություն չստանա առաջիկա խորհրդարանական ընտրություններում: «Եթե մենք մեծամասնություն չունենանք, ես չեմ համագործակցի այն կուսակցությունների հետ, որոնք ղեկավարում էին նախորդ կառավարությունը», ասաց Ցիպրասը:

Իր կուսակցության պառակտման կապակցությամբ Ցիպրասը հայտարարեց, որ «վշտացած է այդ քաղաքացիական պատերազմից»: Նա մեկ անգամ եւս ընդգծել է, որ Հունաստանի ֆինանսական օգնության վերաբերյալ որոշումն ընդունելը դժվար էր, բայց անհրաժեշտ: «Եվրոգոտուց Հունաստանի դուրս գալը տնտեսական աղետ կլիներ»,- նշեց նա:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ ՄԻԳՐԱՑԻՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

Միգրանտների իրավունքների հարցով ՄԱԿ-ի հատուկ զեկուցող Ֆրանսուա Կրեպոն քննադատության է ենթարկել Եվրոպայում ներկայիս միգրացիոն ճգնաժամի հաղթահարման նպատակով Եվրամիության կողմից ձեռնարկվող քայլերը՝ ընդգծելով, որ այդ միջոցները «չեն գործում»: Ժնեւում տարածված հայտարարության մեջ նա Եվրամիությանը կոչ է արել այս բնագավառում մշակել «մարդու իրավունքների վրա հիմնված, համաձայնեցված եւ համապարփակ քաղաքականություն»:

Հատուկ զեկուցողն ընդգծել է, որ տարածքային ինքնիշխանությունը բնավ չի նշանակում, թե սահմանները «պետք է կողպեքով փակվեն միգրանտների առջեւ»: Հիմնախնդրի լուծումը, նրա կարծիքով, Եվրամիությունը պետք է որոնի՝ «միգրանտներին եւ ապաստան հայցողներին տրամադրելով Եվրոպա մուտքի եւ մնալու պաշտոնական ուղիներ»:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԻՍՏ

«ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ ԱՆՊԱՅՄԱՆ ԿԿԱՅՈՒՆԱՆԱ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Ֆինանսների նախարարներին հանձնարարեց բացատրություններ ներկայացնել լարիի կուրսի փոփոխությունների կապակցությամբ: «Ակներեւ է բացահայտ շահարկումն ու ածիոտաժը: Ցանկանում եմ կոչ անել բնակչությանը՝ չենթարկվել հոգեբանական-հուզական ածիոտաժի, քանի որ կա այն բանի մեծ հավանականությունը, որ եթե մարդիկ ենթարկվեն դրան, ապա ավելի շատ կկորցնեն, քան կշահեն: Գլխավորը հանգստություն պահպանելն է: Մեր էկոնոմիկայում, մակրոէկոնոմիկայում առանձնակի ոչինչ չի կատարվում, ընդհակառակը՝ մենք ունենք ներկա փուլը հաղթահարելու լուրջ հնարավորություն»,- հայտարարեց Ղարիբաշվիլին եւ հավելեց, որ երկրից արդեն դուրս է բերվել առնվազն 330 միլիոն դոլար, վերացվել է ներկրման ու արտահանման միջեւ տարբերությունը եւ, ներկա դրությամբ, հիմնարար հիմնախնդիրներ չկան:

Իր հերթին, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հավաստիացրեց, որ լարիի կուրսը անպայման կկայունանա: Նախարարի խոսքերով, պետբյուջեի կողմից իրականացված գործողությունների արդյունքում, հունվար-հուլիս ամիսներին երկիր է մուտք գործել բյուջետային վարկերի ֆինանսավորումից 81 միլիոնից ավելի բյուջետային օգնություն: «Դա ներդրումային վարկերին չի վերաբերում, որոնք Վրաստանն ստանում է ենթակառույցների զարգացման ուղղություններով»,- հայտարարեց Նոդար Խադուրին:

Ինչպես նշեց ֆինանսների նախարարը, մինեւ տարեվերջ սպասվում է լրացուցիչ 110 միլիոն դոլար, այսինքն՝ տարվա ընթացքում բյուջետային գործողություններով կստացվի շուրջ 200 միլիոն դոլար ավելի, քան վճարվելու են վարկերի դիմաց:

Նշենք, որ Վրաստանի ազգային արժույթը սկսեց կտրուկ արժեզրկվել անցյալ տարվա նոյեմբերին:Վրաստանի կառավարությունը լարիի փոխարժեքի անկման պատճառով հայտարարել է 2015 թվականին տնտեսական աճի կանխատեսման վերանայման մասին եւ այն 5 տոկոսից նվազեցրել մինչեւ 2 տոկոս: Կառավարությունը նաեւ հակաճգնաժամային պլան է ներկայացրել օտարերկրյա ներդրումների ներգրավման համար: Երկրի գործադիր իշխանությունը վերջերս հայտարարեց, որ լարիի հետագա արժեզրկումը կանխելու համար կօգտագործվեն լրացուցիչ պահուստներ:

Ավելացնենք, որ ամառային սեզոնի սկսվելուց հետո լարիի փոխարժեքը, իրոք, կայունացել էր, բայց զգալի անկումը վերսկսվեց հուլիսի 14-ից, երբ դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքը կազմեց 2,25, օգոստոսի 7-ին փոխարժեքը հասավ 2,30-ի: Վրաստանի ազգային բանկը օգոստոսի 25-ին դոլարի նկատմամբ լարիի փոխարժեքը սահմանեց 2,3640 լարիի չափով, իսկ հաջոդ օրը լարի-դոլար հարաբերակցությունը գերազանցեց 2,4-ի մակարդակը:

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՄԱԿ-ՈՒՄ ՎՐԱՍՏԱՆԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԼԽԱՎՈՐԱԾ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՄԲ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րուչաշվիլին, Գիորգի Մարգվելաշվիլին կմասնակցի գենդերային հարցերով խորհրդաժողովին եւ կանցկացնի մի շարք երկկողմ հանդիպումներ:

«Կրկին անգամ ընդգծում եմ, որ Վրաստանը ՄԱԿ-ում կներկայացվի վարչապետի գլխավորած մի պատվիրակությամբ, իսկ նախագահը կմասնակցի հատուկ թեմաներին նվիրված մի շարք միջոցառումներին»,- հայտարարեց Վրաստանի ԱԳ նախարարը:

Ինչպես հայտարարեց Վրաստանի ազգային անվտանգության խորհրդի քարտուղար Իրինա Իմերլիշվիլին, Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին մի շարք հանդիպումներ կանցկացնի Նյու Յորքում, ապա կուղեւորվի Վաշինգտոն:

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի նախագահը Լիտվայի նախագահից ստացել է այդ երկրի կողմից Նյու Յորքում անցկացվող միջոցառմանը մասնակցելու հրավեր: Այդ միջոցառումը չի անցկացվում ՄԱԿ-ի հովանու ներքո, ուղղակի ժամանակի առումով դրանք համընկան: Նախագահը երկու օր կանցկացնի Նյու Յորքում, կուենեա հանդիպումներ, ապա կուղեւորվի Վաշինգտոն»,- հայտարարեց ազգային անվտանգության խորհրդի քարտուղարը:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վրաստանում ենթակառույցային ներդրումների Ասիական բանկի (AIIB) հիմնադիր երկրների գլխավոր բանակցողների վեցերորդ հանդիպման շրջանակներում, օգոստոսի 25-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ ենթակառույցային ներդրումների Ասիական բանկի (AIIB) նախագահ Ջին Լիկունի գլխավորած պատվիրակության հետ: Հանդիպմանը քննարկվեցին բանկի հետ համագործակցության հեռանկարներին, բանկի կողմից ֆինանսավորվող ծրագրերի իրականացման հետ առնչվող հարցեր:

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրու եւ ենթակառույցային ներդրումների Ասիական բանկի (AIIB) գլխավոր քարտուղար Ջոն Լիկունի հանդիպմանը կողմերը քննարկեցին AIIB-ի հետ Վրաստանի համագործակցության հետ առնչվող հարցեր, նշվեց, որ Վրաստանն այն առաջին երկրների թվում է, որտեղ անմիջականորեն բանկի ֆինանսավորմամբ, ֆինանսավորվում են ներդրումային նախագծեր, որոնք նշանակալից են ոչ միայն Վրաստանի, այլեւ՝ ընդհանրապես տարածաշրջանի համար:

Նոդար Խադուրին AIIB-ի գլխավոր քարտուղարին մանրամասն տեղեկություններ հաղորդեց տարածաշրջանում եւ Վրաստանում ստեղծված տնտեսական իրավիճակի, նաեւ երկրում առկա բիզնես միջավայրի ու ներդրումային հնարավորությունների մասին: Ֆինանսների նախարարը հավաստիացրեց, որ Վրաստանն ակտիվորեն կներգրավվի ենթակառույցային ներդրումների Ասիական բանկի գործունեությանը:

Հանդիպմանը Վրաստանի ֆինանսների նախարարը մանրամասն տեղեկատվություն հաղորդեց Վրաստանում իրականացվող ենթակառույցային նախագծերի, ինչպես նաեւ երկրում դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող նախագծերի մասին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՊԵՐ

ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱՆՈՒՄ

Օգոստոսի 8-9-ին Վրաստանի խորհրդարանական պատվիրակությունը օրենսդիր մարմնի փոխխոսնակ Գուբազ Սանիկիձեի գլխավորությամբ աշխատանքային այցով գտնվում էր Իրանի Իսլամական Հանրապետությունում:

Այցի շրջանակներում վրաց խորհրդարանականները հանդիպում ունեցան Իրանի խորհրդարանի (մեջլիսի) նախագահ Ալի Լարիջանայի, մեջլիսի Վրաստանի հետ բարեկամության խմբի ղեկավար դոկտոր Հոսեյին Մուաեդին Սարդրիի, Իրանի արտաքին գործերի առաջին փոխնախարի, Իրանի Իսլամական Հանրապետության մշակութային ժառանգության եւ ժողովրդական արհեստի հարցերով փոխնախագահ Մասուդ Սոլթանիֆարի, մեջլիսի արտաքին եւ անվտանգության կոմիտեի նախագահ Թանալեիդ Բարոուջերդի, օրենսդիր եւ գործադիր մարմինների այլ ներկայացուցիչների հետ:

Իրանի մեջլիսում խորհրդարանի նախագահի հետ հանդիպմանը կողմերը քննարկեցին երկու երկրների միջեւ առկա հարաբերությունները, տարբեր ոլորտներում համագործակցության զարգացման հեռանկարները ու տարածաշրջանային անվտանգության հարցերը: Հանդիպմանը մեջլիսի նախագահ Ալի Լարիջանին հավաստեց Վրաստանի անկախության եւ տարածքային ամբողջականության աջակցությամբ Իրանի դիրքորոշումը:

Իր հերթին, Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Գուբազ Սանիկիձեն մեջլիսի նախագահին շնորհակալություն հայտնեց հրավերի եւ հանդիպման համար: Նա վերջինիս շնորհավորեց նաեւ Իրանի միջուկային ծրագրի կապակցությամբ բանակցությունների հաջող ավարտման առթիվ:

Այցի շրջանակներում Իրանում Վրաստանի դեսպանության կազմակերպմամբ անցկացվեց ռուս-վրացական պատերազմի յոթերորդ տարելիցին նվիրված լուսանկարների ցուցահանդես:

Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Գուբազ Սանիկիձեի գլխավորած պատվիրակության կազմում էին Վրաստանի խորհրդարանի պատգամավորներ Ռուսլան Պողոսյանը, Շալվա Կիկնավելիձեն, Փրիդոն Սիղվարուլիձեն, Միրիան Ծիկլաուրին, Ալի Մահմեդովը եւ Նուգզար Ծիկլաուրին:



ՎԱՐՉԱՊԵՏԸ ՏԱԲԱԾՂՈՒՐԻՈՒՄ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին չի գնա արձակուրդ, քանի որ ունի մեծածավալ անելիքներ: Այդ մասին հայտնել է Վրաստանի կառավարության մամլո ծառայության աշխատակից Մանանա Թոքմաջիշվիլին:

Նա հայտարարել է, որ Վրաստանի վարչապետն աշխատանքային ծանր գրաֆիկի պատճառով հրաժարվել է արձակուրդ մեկնելուց. «Նախորդ տարի վարչապետը նույնպես արձակուրդ չի գնացել»: Ղարիբաշվիլին անցած հանգստյան օրերն ավագ որդիների հետ անցկացրել է Բորժոմիի շրջանի Տաբածղուրիի լեռնային լճի մոտ:

ԱՐՏԱԳԱՂԹԻ ՃԱՎԱԼՆԵՐԸ ՄԵԾԱՆՈՒՄ ԵՆ

Վերջին տարիներին Վրաստանից հեռացած քաղաքացիների թիվը կազմում է 1 միլիոն 600 հազար մարդ: Այդ թվից 800 հազարը մեկնել է Ռուսաստան: Նրանցից 286 հազարն արդեն ընդունել է Ռուսաստանի քաղաքացիություն: «Ռեզոնանսի» թերթի տվյալների համաձայն, արտագաղթի առումով երկրորդ տեղում Հունաստանն է (250 հազար մարդ), երրորդը՝ Ուկրաինան (150 հազար): Երկրի քաղաքացիների արտագաղթը նշանակալից է նաեւ Թուրքիայում (100 հազար), ԱՄՆ-ում (80 հազար), Ադրբեջանում (35 հազար) եւ Իսպանիայում (30 հազար):

Հատկանշական է, որ մեկնածներից ավելի մեծ գումարներ Վրաստան առաքում են Ռուսաստանում հիմնավորվածները: Ընթացիկ տարվա հունվար-մայիս ամիսներին Ռուսաստանից Վրաստան է փոխանցվել 163 միլիոն դոլար, ինչը կազմել է ընդհանուր փոխանցումների 37,7 տոկոսը: Վերոնշյալ ժամանակահատվածում Հունաստանից փոխանցվել է 68,8 միլիոն դոլար, իսկ Իտալիայից՝ 43,2 միլիոն դոլար:

ՏԱՆԿԱՐՇԱՎԱՐԱՆ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

Տանկարշավարան է բացվել Թբիլիսիից ոչ հեռու՝ Վազիանիի ռազմակայանում: Այդ մասին տեղեկացրել է Վրաստանի պաշտպանության նախարարության մամուլի ծառայությունը:

«Վազիանիում այդ տանկարշավարանը եւ շատ այլ բաներ կլինեն Համատեղ զորավարժանքների եւ գնահատման կենտրոնի (ՆԱՏՕ-ի վարժանքների կենտրոն) բաղկացուցիչ մասը, որը կբացվի այս ամսվա վերջին»,- տանկարշավարանի բացման ժամանակ հայտարարեց Վրաստանի պաշտպանության նախարար Թինաթին Խիդաշելին:

Տանկարշավարանում վարժանքներ կանցկացվեն թրթուրավոր տեխնիկայի մեխանիկ-վարորդների եւ անձնակազմերի հրամանատարների համար: Այդ նպատակով, տանկարշավարանի ամբողջ տարածքում կառուցվել են իրական մարտական պայմաններին մոտեցված արգելքներ, նշել է պաշտպանական գերատեսչությունը: Տանկարշավարանի բացման առթիվ Վազիանիում տեղի են ունեցել ցուցադրական տանկային վարժանքներ:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՄԱՅՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԳՈՒՅՔ

ԱԼԻՄԵՆՏԸ ԵՎ ԴՐԱ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Ի՞նչ է ալիմենտը (սննդավճար), ո՞ւմ է այն տրվում եւ, ինչպիսի՞ն է ալիմենտի ստացման ընթացակարգը:Այս եւ մյուս հարցերով «Վրաստանի» թղթակիցը զրուցեց արդարադատության նախարարության կատարման ազգային բյուրո ՀԻԻԱ-ի ղեկավար Մարինա Փարցվանիայի հետ:

- Ելնելով նրանից, որ կատարման բյուրո մուտք է գործում ալիմենտի վերաբերյալ բավական թվով գործեր, գտնում եմ՝ նշանակալից կլինի բնակչությանը եւ թերթի ընթերցողներին պարզաբանումներ ներկայացնել, թե ի՞նչ է նշանակում ալիմենտ եւ, ինչպե՞ս է իրականացվում դրա հանձնման ընթացակարգը:

- Նախ, պարզաբանենք հասկացությունը, թե ի՞նչ է նշանակում ալիմենտ, ո՞վ է հանդիսանում պարտապանը եւ, ո՞վ է պարտատուն: Պարտապանն այն անձն է, ով իրավասու է երկրորդ կողմից՝ պարտատուից պահանջելու ալիմենտի վճարումը: Պարտատուն այն անձն է, ում պարտադրվում է պարտապանին վճարել ալիմենտը:

Ի՞նչ է ալիմենտը: Ալիմենտը դա դրամական գումար է, որն ընտանիքից հեռացած անձը պարտադիր կարգով վճարելու է իր ընտանիքի անաշխատունակ կամ անչափահաս անդամներին: Օրինակ՝ զավակներին, ծնողներին, կնոջը (ամուսնուն): Եթե հայրը իր երեխային կամավոր ալիմենտ չի վճարում, եւ երեխայի մայրը դատարանին հայց է ներկայացնում, որը բավարարվում է, ապա պարտապանին (տվյալ պարագայում երեխայի մորը) դատարանի որոշմամբ վերապահվում է ալիմենտ ստանալու իրավունք:

- Ի՞նչ կարող է կատարվել, եթե պարտատուն (երեխայի հայրը) խուսափի այդ պարտավորության կամավոր կատարումից:

- Միանգամից ասեմ, որ պարտատուի կողմից ալիմենտի վճարումից խուսափումը հանգեցնում է քրեական պատասխանատվության: Եթե, չնայած քրեական պատասխանատվության, հայրը խուսափում է դատարանի կողմից սահմանված ալիմենտի վճարումից, ապա պարտապանը իրավասու է դիմելու կատարման ազգային բյուրոյին, որն էլ նրան կօգնի սահմանված գումարի ստացման գործում:

- Ինչպե՞ս է իրականացվում որոշման կատարումը եւ, ի՞նչ ընթացակարգ է իրականացվում:

- Նրանից հետո, երբ պարտապանը կատարման ազգային բյուրոյին ներկայացնում է դիմում եւ այդ դիմումը գրանցվում է, սկսվում է գործի կատարման ընթացակարգը:

- Ի՞նչ փաստաթղթեր են պահանջվում կատարման ընթացակարգն սկսելու համար:

- Կատարման գործողություններն սկսելու համար կատարման ազգային բյուրո պետք է ներկայացվեն հետեւյալ փաստաթղթերը՝ դիմում, դատարանի որոշումը (վավերացված պատճենը), կատարման ձեւաչափը (բնագիրը), դիմորդի անձը հաստատող փաստաթուղթը, երաշխավորագիրը (բնագիրը), բանկային ռեկվիզիտները, թե ո՞ր հաշվով են փոխանցվելու ալիմենտի գումարները: Միաժամանակ նշեմ, որ ալիմենտի հետ կապված գործերի համար պարտապանը ազատվում է կատարողին նախավճարի մուծումից: Կատարման սակագինը կատարողներն ստանում են պարտատուից ներկայացված գումարի եւ տոկոսի չափով:

- Ի՞նչ ընթացակարգ է իրականացնում կատարման ազգային բյուրոն ալիմենտի պահանջի վերաբերյալ մուտք գործած գործերի կապակցությամբ:

- Ալիմենտի վճարումը վերաբերում է անհապաղ կատարման ենթակա որոշումների կատեգորիային եւ, հետեւաբար, կատարողը, որին հանձնարարվում է ալիմենտի գործի կապակցությամբ կոնկրետ հարցը, պարտավոր է առաքել դիմում՝ ալիմենտի կամավոր վճարման անհապաղ կատարման առաջարկությամբ: Եթե պարտատուն անհապաղ չի կատարում իրեն վերապահվող պարտավորությունը, ապա կատարողը դիմում է հետեւյալ պարտադրող գործողություններին՝ պարտատուն գրանցվում է «պարտատուների ռեեստրում», ինչը հանգեցնում է օրինական իրավունքների սահմանափակման, իրականացնում է պարտատուի գույքի գրանցումը, ապա՝ դրա կալանքը, գնահատումը: Գնահատումից մեկ ամսվա ընթացքում անցկացվում է պարտադիր վաճառքը, եւ պարտատուի ունեցվածքը վաճառվում է: Վաճառքից ստացված գումարը փոխանցվում է կատարման բյուրոյի դեպոզիտային հաշվի վրա, որից ֆինանսավորվում է կատարման սակագինը, եւ ալիմենտի գումարը փոխանցվում է պարտապանի կողմից ներկայացված բանկային հաշվի վրա:

Նշեմ, որ ալիմենտների տրման հետ կապված գործերի կապակցությամբ պետք է հաշվի առնվեն հետեւյալ հանգամանքները՝ ալիմենտի հետ կապված գործերի վրա ժամանակի տեւողության գործոնը չի ազդում, ալիմենտի վճարումը սահմանվում է հայցի ներկայացումից մինչեւ երեխայի չափահաս դառնալը, ալիմենտի վճարման պահանջը կարող է իրականացվել կատարման ձեւաթղթի ներկայացումից առնվազն երեք տարվա ընթացքում:

- Ո՞ր դեպքերում է ընդհատվում ալիմենտի հետ կապված գործը:

- Եթե պարտապանը հրաժարվում է իր ներկայացրած հայցից կամ այն դեպքում, եթե կողմերից մեկը (կամ պարտապանը կամ պարտատուն) վախճանվում է: Նման պարագայում ալիմենտի հետ կապված գործն ընդհատվում է:

- Ի՞նչ գործողություններ են իրականացվում այն դեպքում, եթե ալիմենտի պարտատուի գտնվելու վայրը անհայտ է:

- Այն դեպքում, եթե պարտատուի գտնվելու վայրը չի հաստատվում կամ նա հատուկ խուսափում է ալիմենտի վճարումից, նրա նկատմամբ հայտարարվում է փնտրտուք:

- Տիկին Մարինա, ինչպե՞ս է գործում կատարման բյուրոն եւ, եթե պարտատուն գտնվում է արտասահմանում:

- Ցավոք, նման դեպքերում, ստիպողականորեն ալիմենտի գումարի վճարումը դառնում է անհնարին, քանի որ պարտատուի փնտրտուքը իրականացվում է միայն Վրաստանի տարածքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԵՂՄՆԱՎՈՐՈՒՄ. ԱՎԵԼԻ ԿԱԹ, ԱՎԵԼԻ ՄԻՍ ՈՒ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԵԿԱՄՈՒՏ

Նինոծմինդայի շրջանում սկսվել է կովերի ու խոզերի մթերատվության համար արհեստական բեղմնավորման միջոցով նոր, ժամանակակից սարքավորումների եւ եվրոպական մի շարք երկրներում մեծ համբավ ունեցող կովերի ցեղատեսակների գենետիկ նորամուծությունների կիրարկումը: Ինչպե՞ս է ընթանում այս նոր, կարեւոր գործը: Այս հարցով մենք դիմեցինք այդ գործի նախաձեռնող Սոսիկո Ամիրխանյանին:

- «Վրաստանի» ընթերցողները լավ գիտեն, որ մեր, Նինոծմինդայի շրջանի բնակչության մեծ մասը զբաղվում է անասնապահությամբ: Մեր արոտավայրերի լայն տարածքների պայմաններում մեծ է էկոլոգիապես մաքուր մսի ու կաթի ստացման ներուժը, սակայն գործնականում գյուղատնտեսական կենդանիների խնամքը ոչ այնքան եկամտաբեր զբաղմունք է: Ավելի մեծ քանակությամբ կաթ ու միս ստանալու համար անհրաժեշտ է ժամանակ առ ժամանակ նորացնել կենդանիների ցեղատեսակը: Մինչեւ վերջին ժամանակներս կենդանիների ցեղատեսակի փոխելը բավականին բարդ գործ էր: 2015 թվականի մայիսից Նինոծմինդայում սկսեց գործել խոշոր եղջերավոր անասունների եւ խոզերի արհեստական բեղմնավորման ծառայությունը:

- Ինչպե՞ս ծագեց այդ ծառայության բացման գաղափարը:

- Թբիլիսիում գործող «Կովկասյան գենետիկա» ընկերության հետ ձեւակերպեցի պայմանագիր, որի հիման վրա ձեռք բերեցի անհրաժեշտ տեխնիկան ու գենետիկ նյութեր:

- Ո՞ր ցեղատեսակի կովերի մասին է խոսքը:

- Դրանք ամերիկյան եւ եվրոպական կովերի նոր «Շվից», «Ջելսի», «Խոլշտեյն» տեսակներն են: Տեղական կովերի հետ սելեկցիայի միջոցով կարելի է ստանալ խոշոր եղջերավոր անասունի տեսակներ, որոնք կարող են հարմարվել տեղական պայմաններին եւ աչքի կընկնեն բարձր մսատվությամբ ու կաթնատվությամբ: Մի խոսքով, մեզ հարկ է ուղղակի բարելավել տեղական տեսակը, որպեսզի նրանից ստացվի ավելի շատ միս, կաթ եւ ավելի շատ եկամուտ:

Մայիսի վերջերից մինչ օրս Նինոծմինդայի մունիցիպալիտետում անցկացվել են 40 կովերի եւ 50 խոզերի արհեստական բեղմնավորումը: Առաջին արդյունքն ի հայտ կգա սեպտեմբերին, երբ կծննդաբերեն առաջին բեղմնավորվածները: Մի կովի բեղմնավորման գինը 50 լարի է, իսկ խոզինը՝ 70: Այն դեպքում, եթե առաջին փորձից հետո բեղմնավորումը չի հաջողվում, ապա երկրորդ փորձի համար ցուցաբերվող սպասարկումն անվճար է: Եթե երկրորդ փորձի դեպքում էլ անհաջողություն է լինում, ապա ակնհայտ է, որ կենդանին բուժման կարիք ունի:

- Ի՞նչ եք անում բնակչության շրջանում նորամուծության տարածման ուղղությամբ:

- Կենդանիների արհեստական բեղմնավորման հնարավորության մասին լուրը մենք տեղի բնակչությանը հասցնում ենք բնակավայրերում անցկացրած հանդիպումների միջոցով: Այս հարցում «Վրաստանը» եւս, այս հարցազրույցի հրապարակմամբ, նշանակալի ավանդ է ներդնում: Շնորհակալություն, ձեզ:

Թեպետ նշեմ, որ բնակչության շրջանում կենդանիների արհեստական բեղմնավորման նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չէ:

- Ինչո՞ւ:

- Օրինակ, Դիլիֆ գյուղի բնակիչների խոսքերով, իրենք տեղեկացված չէին, որ Նինոծմինդայում հնարավոր է անցկացնել արհեստական բեղմնավորում: Նրանք այդ մասին չէին լսել ու տեղյակ չէին: Ասում էին, որ, իբր, եթե մեր կովերը արհեստականորեն բեղմնավորվեն, նրանք չեն կարողանա ծնել հորթեր, քանի որ տարիքով են:

Իսկ մենք, մինչեւ բեղմնավորումը անցկացնում ենք ստուգման եւ կենդանիների ընտրության գործընթացը եւ դեպքեր, երբ կենդանիները չեն կարողանում դիմանալ բեղմնավորմանը, գրեթե չեն լինում:

Նախկինում՝ խորհրդային ժամանակներում կովերի արհեստական բեղմնավորում հաճախ էր կատարվում, թեպետ փլուզումից հետո այն դադարեցվեց, քանի որ չկային ոչ պայմաններ, ոչ հնարավորություններ: Հիմա ֆերմերների համար լավ հնարավորություն է ծագել, որպեսզի փոխեն կենդանիների ցեղը ու ստանան լավ արտադրանք:

- Ե՞րբ սկսեցիք իրագործել այս գաղափարը:

- 2006 թվականից, երբ բացեցի «Անհատ ձեռնարկատեր Սոսիկո Ամիրխանյան» ձեռնարկությունը: Քանի որ իմ հիմնական գործունեությունը անասնաբուժական դեղորայքի, կերային հավելումների ու անվճար խորհրդատվությունների մատակարարումն է, հիմնական օբյեկտը անասնաբուժական դեղատունն է, որը գտնվում է Նինոծմինդա քաղաքի կենտրոնում: Եվս մեկ անգամ ընդգծեմ, որ արհեստական բեղմնավորման կենտրոնը բացվել է իմ սեփական միջոցներով եւ այդ գումարներով էլ ձեռք էր բերվել անհրաժեշտ գույքը՝ հեղուկ ազոտի համար տարողությունները, շարժական սառնարանները, մյուս անհրաժեշտ գործիքները:

- Ֆերմերներից առաջարկություններ ստացվո՞ւմ են, թե՞ ոչ:

- Այո: Բնակիչներից հաճախ են ստացվում առաջարկություններ եւ նախաձեռնություններ՝ խոշոր եղջերավոր անասունների ու խոզերի արհեստական բեղմնավորման ոլորտում տեղական ֆերմերներին օգնություն ցուցաբերելու հարցերով: Կրկնեմ, որ մեր հիմնական նպատակը գյուղատնտեսական բիզնեսի զարգացումն է, բարձրորակ մթերքի՝ մսի ու կաթի ստացումը, սկզբնական փուլում զգալի արդյունքների ապահովումը եւ, վերջին հաշվով, բիզնեսի հետագա զարգացումը:

ԲՈՐԻՍ ՂԱՐՍԼՅԱՆ

Նինոծմինդա

ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԹՎԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՄԱՆ ԱՆՑՈՒՄՆ ԱՎԱՐՏՎԵՑ

Վրաստանում թվային հեռարձակման անցումն ավարտվեց: Հիշեցնենք, որ այն մեկնարկել էր հուլիսի 1-ին եւ ավարտվեց օգոստոսի 25-ին:

Ինչպես հայտարարեցին Վրաստանի էկոնոմիկայի նախարարությունում, նույնական հեռարձակումից թվայինին անցումը պայմանավորված էր 2006 թվականի Ժնեւի պայմանագրով եւ բարեփոխումների իրականացմամբ Վրաստանը կատարում էր միջազգային պարտավորությունները: Թվային հեռարձակման ստացման համար բնակիչները պետք է ունենան հեռուստացույցեր կամ այսպես կոչված, «set-top boxes»՝ DVB-T2 չափորոշիչով: Բացի այդ, երաշխավորված ազդանշանի ստացման համար անհրաժեշտ է ունենալ տանիքին ամրացված մետրային-դեցիմետրային ալեհավաք: Սոցիալապես անպաշտպան ընտանիքները, ում վարկանիշային միավորները 70 հազարից պակաս են, նման սարքերը պետությունից ստացան անվճար:

Նույնականից թվային հեռարձակման անցումը դյուրացնելու նպատակով, մշակվել ու գործում են «set-top boxes» սարքի ձեռքբերման արտոնյալ պայմաններ: Համապատասխան համաձայնությունը ձեռք է բերվել Վրաստանի էկոնոմիկայի եւ կայուն զարգացման ու երկրի բանկային համակարգի հետ անցկացված բանակցությունների շնորհիվ:

Թբիլիսիում «Set-Top Box» սարքը արժե շուրջ 60 լարի:

Ինչպես նշեցին էկոնոմիկայի նախարարությունում, թվային հեռարձակման անցումը դրական նշանակություն ունի՝ ինչպես երկրի, այնպես էլ հեռուստաալիքների ու բնակչության համար:

«Նախ, թվային հեռարձակման անցումը ազդեցություն կգործի լրատվական բազմերանգության, ազատ խոսքի ու հեռուստատեսության հետագա զարգացման վրա: Օրինակ, մինչ այդ հեռուստատեսության մեկ հաճախականությամբ գործող հեռուստաալիքը առաջիկայում կտարածվի 15 թվային հեռուստաալիքների վրա: Դա, իր հերթին, ներկայումս գործող եւ հեռանկարային հեռարձակման կայաններին հնարավորություն կընձեռի տարածվել ողջ Վրաստանի մասշտաբով: Իսկ բնակչությունը կստանա որակյալ հեռուստաալիքներ ստանալու հնարավորություն»,- ասված է նախարարության հաղորդագրությունում:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ